Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

02.դեկտեմբերի 2011թ գ.Գեղաշեն

2011 թվականի դեկտեմբերի 2- ին տեղի է ունեցել Գեղաշեն համայնքի հաշվետու համայնքային ժողովը 01.01.2011-01.12.2011թթ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների մասին;

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝

1 Կոտայքի մարզպետ Կ. Շահգալդյան
2.Կոտայքի տարածքային կառավարման վարչության պետ Ս. Հակոբյան
3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Եղիազարյան
4.Մարզպետի օգնական Գ. Հայրապետյան
5.Հողաշինարար Լ. Պողոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1.Դավթյան Անդրանիկ
2.Սամսոնյան Սուրեն
3.Հակոբյան Հակոբ
4.Խաչատրյան Սմբատ
5Բաղալյան Արա
6.Հովհաննիսյան Հայկ
7.Բաբայան Արթուր
8.Գրիգորյան Արամ
9.Աբրահամյան Լյովա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1.Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Ադամյան
2.Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Վ. Քոչարյան
3.Մշակույթի տան տնօրեն Ա. Դավթյան
4.Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Ծառուկյան
5. Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Ն. Խաչատրյան
6. Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Լ. Հովհաննիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ 250 ՄԱՐԴ

ՕՐԱԿԱՐԳ

ԼՍԵՑԻՆ -- Համայնքի ղեկավար Արմեն Հովհաննիսյանի հաշվետվությունը 2011թվականի 11 ամիսների կատարած աշխատանքների մասին

Հարգելի Գեղաշենցիներ ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀօրենքի պահանջներով Ձեզ է ներկայացվում 2011 թվականի 11 ամիսներին

համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից իրականացված հիմնական գործառույթները;
Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել են 46 որոշում, 101 կարգադրություն, ավագանու կողմից կայացվել է 24 որոշում ;

Ֆինանսական բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում

Բյուջեի եկամուտներ՝	պլան հազ.դրամ	փաստացի հազ.դրամ	Կատ%- ը
1. Հողի հարկ	2894.0	2515.0	97
2. գույքահարկ	4515.0	5813.9	128
3.տեղական տուրքեր	100.0	101.5	101
4. դոտացիաներ	52519.5	48142.8	92
5.հողի վարձավճար	330.0	233.1	70
6.պետ լիազորություններ	1800.0	450.0	25
7.մուտքեր տուժերից	100.0	50.0	50
8.վարչական գանձումներ	---	19.0	--
ֆոնդային բյուջեի եկամուտներ		3600.2	
ընդամենը եկամուտներ	62259.5	61137.5	

2011թ գյուղի խմելու ջրագծի կառուցման ածխատանքների համար համայնքի բյուջեից ծախսվել է 33348.5 հազար դրամ որից՝

1. նախագծային նախահաշվային աշխատանքների համար 3960.0 հազ. դր.
2. կառուցապատման աշխատանքների համար 26411.0հազ.դր
3.տեխնիկական հսկողության համար 440.0 հազ.դր
4.հեղինակային հսկողության համար 145.0 հազ դր
5. սոց հիմնադրամի 5%- ը 2392.0 հազ.դր

ջրագծի կառուցման աշխատանքների համար կառավարության կողմից ներդրվել է 18000.0հազ. դրամ
ջրագծի կառուցման ավարտի համար սոց. հիմնադրամի կողմից ներդրվել է 47491.080 հազ. դրամ
Ջրագծի կառուցման աշխատանքները ամբողջությամբ ավարտին կհասցվի մինչև տարեվերջ;

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ

2011թ. հաշվետու ժամանակաշրջանում օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքներին , մահացած բնակիչների հարազատներին, համայնքում նոր ծնված երեխաների մայրերին համայնքի բյուջեյից տրվել է սոց. օգնություն 4380.0 հազ. դրամի չափով;

Հողօգտագործման բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում կազմակերպվել է համայնքային սեփականություն համարվող հողերի աճուրդ վաճառք; Աճուրդի ընթացքում համայնքի բյուջե է մուտք եղել 1102.0 հազ. դրամ;

Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ

Համայնքում պատշաճ ձևով իրականացվում է աղբահանության աշխատանքները և այս ժամանակահատվածում համայնքի բյուջեյից նշված աշխատանքների իրականացման համար ծախսվել է 2320.0 հազ. դրամ;

Ելույթներ

1Ավագանու անդամ Ա. Դավթյանը նշեց որ խմելու ջրագծի կռուցումը իրոք շատ մեծ նշանակություն ունի համայնքի սոցիալ տնտեսական զարգացման համար և ջրագծի կառուցումով վերջնականապես լուծվելու է գյուղի խմելու ջրի խնդիրը;

Առաջարկություններ համայնքի բնակիչների կողմից

Համայնքի բնակիչ Վ. Սարգսյան ----- 4500 բնակչություն ունեցող գյուղը չունի մանկապարտեզ, նախադպրոցական տարիքի երեխաներին ծնողները մեծ դժվարությամբ տանում են հարևան գյուղի և Աբովյան քաղաքի մանկապարտեզներ և այսօր հրատապ հարց է դարձել գյուղում մանկապարտեզի կառուցումը;

ՈՐՈՇԵՑԻՆ

1.Համայնքի ղեկավար Ա. Հովհաննիսյանի հաշվետվությունը 2011թ վականին կատարված աշխատանքների մասին ընդունել ի գիտություն;

2.Ընթացիկ տարում իրականացնել քառամյա ծրագրով նախատեսված աշխատանքները;

ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ